ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «----------» 2012թ. N --- - Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՒԲԻՆՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի բ) կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28.2-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման կարգը հաստատելու մասին» N 1098-Ն որոշմամբ սահմանված կարգը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի հիմնանորոգման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցնելուց հետո առաջարկություն ներկայացնել Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու
2012 թվականի ---------- ----
N ——Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
Երևան քաղաքում գտնվող պետական՝ սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի հիմնանորոգման

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված է Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների օգտագործման վերաբերյալ առաջարկությունները՝ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում կապիտալ ծախսերի ծրագրերի տեսքով, որոնց իրականացումը ուղղված է բնակչության խմելու և ոռոգման ջրի, համայնքային նշանակության ճանապարհների, մանկապարտեզների, ինչպես նաև այլ ենթակառուցվածքների հիմնախնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի անմխիթար վիճակը, Երևանի քաղաքապետարանի կողմից պատվիրվել են փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, համաձայն որի նախահաշվային արժեքը կազմում է 289,061,8 հազար դրամ:

Միաժամանակ, Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված մուտքերի՝ 30 տոկոս կազմող ֆինանսական միջոցների մնացորդը 02.04.2012 թվականի դրությամբ կազմում է 219,099.8 հազար դրամ:

Երևանի քաղաքապետարանը նախատեսում է Ռուբինյանց փողոցի վերանորոգման աշխատանքների գնման գործընթացը կազմակերպել 219,099.8 հազար դրամի շրջանակներում՝ ակնկալելով, որ մրցակցության արդյունքում հնարավոր է նշված աշխատանքներն իրականացնել առկա միջոցների հաշվին:

Ռուբինյանց փողոցի հիմնանորոգման ծրագիրը ներառում է Ռուբինյանց փողոցի՝ Պարույր Սևակ փողոցի-ավտոդպրոցի հատվածից մինչև Ավանի ուղետար և Ավանի ուղետարի Աճառյան փողոցի Զեյթուն տանող հատվածի երթևեկելի մասի ասֆալտ–բետոնյա ծածկի հիմնանորոգումը, ներառյալ դիտահորերի և անձրևորսիչների կարգաբերումը ու փոխարինումը, հարթեցնող շերտի իրականացում և 4.5 սմ հաստությամբ ասֆալտ-բետոնյա ծածկի ամբողջական իրականացում: Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է նաև փողոցի շուրջ 70 տոկոս մայթերի ասֆալտ–բետոնյա ծածկի, ինչպես նաև բազալտե և բետոնե եզրաքարերի քանդում և վերականգնում, հաշմանդամների համար մեկ թեքուղու կառուցում, ճանապարհի երկայնությամբ գոյություն ունեցող սիզամարգերի վերականգնում:

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՒԲԻՆՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցներն ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորմանը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից ստացվող մուտքերի 30 տոկոսի չափով։

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098–Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսվում է նշված միջոցների օգտագործման համար սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը՝ համաձայնություն ստանալու համար։ Միաժամանակ, Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված մուտքերի 30 տոկոս կազմող ֆինանսական միջոցների մնացորդը 02.04.2012 թվականի դրությամբ կազմում է 219,099.8 հազար դրամ։

Ելնելով վերոգրյալից՝ Երևանի քաղաքապետարանը մշակել է Ռուբինյանց փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, համաձայն որի աշխատանքների արժեքը կազմում է 289,061,8 հազար դրամ։ Նշված աշխատանքների ձեռքբերումը նախատեսվում է իրականացնել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչի արդյունքում մրցակցության շնորհիվ հնարավոր կլինի աշխատանքների գնումը կազմակերպել առկա միջոցների հաշվին։ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098–Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ կառավարությունից համաձայնությունն ստանալուց հետո նախատեսվում է կատարել համապատասխան փոփոխություններ Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեում։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՒԲԻՆՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՌՈՒԲԻՆՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Ռուբինյանց փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեով նախատեսված միջոցներում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**